ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2019 թվականի ապրիլի 12-ի նիստի N 10 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Ռ.Ա.Հայրապետյանը, Ա.Բ.Սալնազարյանը, դոցենտներ Գ.Ա.Նազարյանը, Ա.Գ.Հակոբյանը, ուսումնական բաժնի ուսումնամեթոդական ծառայության ղեկավար Գ.Մ.Մերդինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 1. Գիտական խորհրդի՝ 2018 թվականի մարտի 5-ի նիստում (արձանագրություն N 5) հաստատված «Ավարտական աշխատանքի կատարման և պաշտպանության մեթոդական ցուցումներում» կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) բովանդակության 3.1-ին կետից հանել «նախնական» բառը.

2) 2.1-ին կետի 2.1.7-րդ ենթակետի 6-րդ թվարկումը «ավարտական աշխատանքի նախնական պաշտպանություն,» բառերից հետո լրացնել «՛ամբիոնի հայեցողությամբ» բառերով.

3) 2.1-ին կետի 2.1.8-րդ ենթակետի 3-րդ թվարկումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ավարտական աշխատանքի նախնական պաշտպանություն ամբիոնի հայեցողությամբ, հրապարակային պաշտպանությունից առաջ».

4) 2.1-ին կետի 2.1.8-րդ ենթակետի 4-րդ թվարկման մեջ «20» բառը փոխարինել «10» բառով.

5) 2.1-ին կետի 2.1.8-րդ ենթակետի 5-րդ թվարկման մեջ «15» բառը փոխարինել «5» բառով.

6) 3-րդ գլխի 3.1-ին կետը «ավարտական աշխատանքի նախնական պաշտպանությունը կազմակերպում է ամբիոնը:» բառերից հետո լրացնել «՛իր հայեցողությամբ, ոչ պարտադիր» բառերով.

7) N 2 հավելվածը «ղեկավար» բառից հետո լրացնել «երաշխավորվում է պաշտպանության» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն՝ կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ.Ա. Հայրապետյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն.Հ. Դարբինյան**

2019 թ. ապրիլի 12
Երևան